

յորժամ սկսանիցի հաղալ յիւրաքանչ  
շիւր նուռագ մեծ զբգալ մի :

Կոյնովէս օշաբակ նցյ , ծաղկի  
նարնջենոյ և կապալիէր , որք են յոյժ  
օգուտ հաղի և կապգուրիչ կրծոց , յո-  
րոց առցէ հիւանդն զայն , որ առա-  
ւել հաճոյ իցէ ըմպել կամ օգուտ  
ընծայեսցէ ինքեան :

(Ըստ Առաքելութեան)

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

I. Պօլսոյ ազգային պարբերական  
թերթերէն կը տեսնենք , որ կրօնական  
Ժողովը Շնորհիւնը ջերմ վիճաբա-  
նութեան տեղի տուռած է Վագային  
Արեափոխանական Ժողովին մէջ , թէ  
ուր եղերած է մինչեւ յարդ վիճաբա-  
նութեան արդիւնքն . ընտրաւած է  
արդեօք կրօնական Ժողովն . և Բնէ  
եղանակաւ , այս մասին վարժանական  
լուր չունինք տակաւին : Իսյց Խոնդ-  
րոյն կարեւորութիւնը կը ստիպէ ըն-  
մել հրապարակաւ յայսնել մեր հա-  
մոցումն , եթէ ոչ Արեափոխանական  
Ժողովի ներկայ վիճաբանութեանը  
հացնելու . (որ գուցէ արդէն լլումն  
ստացած է ) , գէթ ապագային մէջ նը-  
կատողութեան և խելամտութեան ա-  
ռատ նիւ թ մատակարարելու համար :  
Եւ այս աւելի համապատասխան է մեր  
բուն նպատակին , որ է ճշմարտու-  
թեանը միայն պատկանիլ և ոչ այս  
ինչ կամ այն ինչ կուսակցութեան :

Աեր Վագային Աահմանադրութիւնը  
կրօնական Ժողով մի կը ներկայացնէ  
մեղ , անդամոց քանակութիւնը եւ  
պարտուց սահմանը համառօտիւ զը-  
ծելով : Իսյց թէ համապատշաճ է

արդեօք սցն կրօնական Ժողովի կազ-  
մութիւնն մեր Հայաստաննեաց Ակե-  
զեցւոյ վարչական սգւոյն , և ազգային  
է արդեօք իւր ծնունդն , թէ օտարո-  
տի . այս պարագաները մի առ մի պար-  
զելու համար , հարկ է նախ մեր Ակե-  
զեցւոյ վարչական սկզբունքի յատուկ  
նկարագիրը դիտել և ապա նոյն նկա-  
րագրով ամեն բան քննել և գատել :

Ինդհանրսպէս խօսելով , ամեն  
քրիստոնեայ ազգաց եկեղեցիներ , ոչ  
այնքան վարդապետութեամբ , որչափ  
վարչական սկզբունքով իրարմէ կը  
տարբերին : Եւ վարչական սկզբունքը  
խիստ և խիստ մեծ նշանակութիւն  
ունի որ և իցէ եկեղեցւոյ քրիստոնե-  
ական յառաջադիմութեան կամ յե-  
տադիմութեան նկատմամբ , վասն զի ,  
ինչպէս քաղաքական , նոյնովէս և եկե-  
ղեցական վարչութեան եղանակներն  
մեծ ազգեցութիւն ունին ժողովրդոց  
լուսաւորութեան , բարօրութեան և  
վարուց ու բարուց վրայ : Տիեզերական  
պատմութեան մէջ կը տեսնենք ար-  
դէն՝ թէ ինչ յեղյեղուկ վիճակի մէջ  
կը ներկայանան մեզ քաղաքական վար-  
չութեանց եղանակներն , մերթ նա-  
հապետական , մերթ բանապետական ,  
մերթ անկախ , մերթ սահմանեալ մի-  
ապետական , մերթ հասարակապետա-  
կան , այլովքն հանդերձ . և թէ քանի  
քանի՞ յուղմունքներ և յեղաշրջու մներ  
պատճառած են և կը պատճառեն ըն-  
կերական աշխարհի զանազան դասա-  
կարգերուն մէջ : Աակայն այս ամեն զը-  
րութեանց և յեղափոխաւթեանց մէջ  
ընդ հանուր միտում մի կը նշմարուի  
ակներեւ , որով բացառիկ արտօնու-  
թիւններն օր աւուր կը վերնան և ժո-  
ղովրդական վեհապետութեան տար-  
ըլ նշանակութիւն կը ստանայ թէ  
պատմութեան , թէ օրէնսդրութեանց  
և թէ վարչական եղանակներու մէջ :

Այս երեւոյթն, որ քաղաքական աշխարհի հօրիզոնին վրայ կ'երեւութանայ մեղ, եթէ քաջ դիտենք, նոյնը կը տեսնենք նաև կրօնական աշխարհ. Հի հօրիզոնին վրայ: Եւ անհնարին է որ, եթէ ոչ աւելի, գէթ քաղաքականին չափ կրօնական վարչութեան է զանակն եւս ժողովրդոց ու շադրութիւնն ըսդրաւէ. վասն զի երկուքն եւս, ինչպէս ասացինք, մեծ նշանակութիւնունին ընկերական կենաց նկատմամբ:

Ամեն ազգեր կը պախտարակեն այս օր Պատգական վարչութեան դրութիւնը և նոյն իսկ Կաթողիկութեան ծոցին մէջ սնոււած աստուածաբաններն, ինչպէս են Տէօլինկեր և այլք, ամենէն բարձրաբարբառ բողըքարկուներն են նոյն վարչութեան գէմ, որ ոչ միայն ժողովրդի միջամտութիւնն եկեղեցական գործոց մէջ բացէ ՚իբաց կը մերժէ, այլ և եկեղեցական մարմայն անօխալականութիւն վերաբրելով՝ անպայման իշխան և անպայման օրենսդիր կը կացուցանէ հասարակաց խղճի վրայ: Ովկարող է այս անհեթեթ վարչական դրութիւնը համաձայնեցնել Պրիստոնէտկան ՚նախկինն Եկեղեցւոց վարչական սկզբունքին հէտ, և ովկարող է երաշխաւորել թէ երկար պիտի տեւէ սոյն օրինակ կղերական աղնուապետութիւնը, որ բոլորովին հակառակ է քրիստոնէտկան Եկեղեցւոց աղաւութեան և Վւետարանի քարոզած եղբայրութեանն ու հաւասարութեան:

Պատգական վարչութեան դրութիւնը գատապարտելով մէկը ջառագով չենք նաև բողըքականութեան քանի մի ճիւղերուն մէջ ընդունուած վարչական (չասենք անիշխանական) դրութեանը, ուր ըսկայ յատուկ եկեղեցական պաշտօնէութիւն,

չըկան յատկապէս նոյն պաշտօնին նըւ ւիրաւած անձինք, այլ իւրաքանչիւր անդամ՝ եկեղեցւոց Պատգամ' է. Այս դրութիւն եւս հակառակ է Պրիստոնէտկան ՚նախկինն Եկեղեցւոց վարչութեան հոգւոյն, վասն զի Պրիստոնէտկան Շմարիտիա Եկեղեցին ոչ միայն անիշխանութիւն չէ, այլ ընդհակառակն հզօր սկզբունքով հզօր վարչութիւն, որուն մէջ ամփափուած է իւր աղաւութիւնը, իւր կոչման տեւականութիւնը, իւր նպատակի յառաջադիմութիւնը և իւր մեծ դորձը երկրի վրայ:

Ի՞նչ է այս վարչական հզօր սկզբունքն և ուր որսնելու է արդեօք: Որուն յանձնելու է Եկեղեցւոց վարչութիւնը, որպէս զի ապահով լինի և անվտանգ: Վրդեօք քաղաքական իշխանութեան: — Ոչ երբեք, վասն զի ծանր է Եկեղեցւոց կոսպիլ քաղաքական կառավարութեան հետ և իւր խիզճը ծախել. վասն զի Եկեղեցին ինքն բարձր պարտաւորութիւններ ունի կատարելու և իւր Փեսան երկինքն է. ուստի եթէ ծախուի քաղաքական իշխանութեան, իւր Փեսային դէմ անհաւատարմութեամբ մեղանշած կը լինի, ինչպէս են ամեն եկեղեցիներ, որոց իշխողն քաղաքական կառավարութիւնը է, Վրդեօք Եկեղեցւոց վարչութիւնը յանձնելու է միայն եկեղեցականաց: — Ոչ երբեք, վասն զի եւ կեղեցականութիւնն Եկեղեցին, այսինքն ժողովրդէն բաժանել և առանձին իշխալ մարմին կազմել, կը նշանակէ Եկեղեցին և եկեղեցականութիւնը, կամ (ըստ պատգական արտաբերութեան) ժողովուրդն ու կղերը անհաշտ ատելութեան մէջ դնել, ինչպէս ակներեւ կը տեսնենք Պատգական

վարչութեան մէջ։ Արտ՛ոն յանձնելու է ուրեմն Եկեղեցւոյ վարչութիւնը, Արդեօք քաղաքական կառավարութեան և Եկեղեցականաց միանգամայն։ — Այս երբէք, վասն զի անհրաժեշտին է այս ձեւ վարչութիւնը։ Ասսն զի քաղաքականութիւնն ու Եկեղեցականութիւնն ունին իւրաքանչ չիւրին իրենց յառաւ կ հեղինակութիւնն ու ստորագելիքն, և իշխանութիւնը չը բամբնուիր, որ կես վարչութիւն քաղաքականէն Ենթադրելոք և կես վարչութիւն Եկեղեցականէն։ Աւստի և կառարեալ ցնորբ է այն օրինակ հակառակառարր քաղաքրութեամբ վարչութիւն երեւակայել։ Այս, քաղաքականութիւնն և Եկեղեցականութիւնը կը կառավարեն Եկեղեցին, բայց ոչ թէ միասին, այլ փոփոխակի, որով և միշտ խոռոչութիւն և անհաշտութիւն կը տիրեն երկու իշխանութեանց մէջ։

Ենք ազգային քաղաքականութիւն չունինք, բայց այն հարցուապատասխաններն յառաջ կը բերենք, որպէս զի Եկեղեցւոյ վարչական սկզբունքին նկատմամբ անորոշ և անբացայցայտ կէտ չը թողունք, և մեր համազումն մեկին և լուսաւոր կերպիւ ներկայացնենք հասարակաց դատողութեան։ Արտ՛ոն յանձնելու է ուրեմն Եկեղեցական վարչութիւնը։ — Եկեղեցական վարչութիւնը յանձնելու է՝ ոչ քաղաքական իշխանութեան, ոչ ըսկ Եկեղեցականաց և ոչ երկուսին միանգամայն, այլ յանձնելու է Եկեղեցական նին և ժողովրդին՝ ՀՈՎՈՒՐՆ և ՀՕՏԻՆ։ Այս է ամենէն ընտիր եւ յարմար միջոցն Եկեղեցական վարչութեան, թէ քաղաքական իշխանութիւն ունեցող և թէ չունեցող քրիստոնեայ ազգաց համար։ Այս եղանակաւ միայն Եկեղեցական վար-

չութիւնը հզօր կը լնի և երբէք ընդհարումներ չեն պատահիր քաղաքականութեան մէջ, որով և կ'անհետին ամեն աղետապի հետեւանքներ ։ Ա ասն զի, Ժողովարքն, որ քաղաքական չինութեան պատուանգանն է, լնելով նաեւ շաղախ Եկեղեցական վարչութեան շնուռածքին, միշտ ակնածելի և զօրաւոր կը կացուցանէ Եկեղեցին Տէրութեան առջեւ, որ իւր շահուց համար կը պարտաւորի անշուշն ոչ միայն Եկեղեցւոյ շահուն չը դոկիլ, այլ ընդ հակառակի ապահովել զայն և յարգել։ Այս վարչական եղանակաւ ոչ տէրութիւնն երկիրւ կ'ունենայ Եկեղեցին և ոչ Եկեղեցին Տէրութեանէն։ Այս վարչական ձեւն, այսինքն ժողովրդականաց միջամտութիւնն Եկեղեցական գործոց մէջ, այն քան շահաւեւ է և յարմար, որ ամեն մարդիկ ճշմարտութենէ կըստիսկուինը նոյնը խոստովանիլ և ընդունիլ. վասն զի յայտնի է, որ Եկեղեցին Ժողովրդականքն են և Քրիստոնէական Եկեղեցւոյ արշալուսին ժամանակ ամենեւին չենք տեսներ Եկեղեցականի և աշխարհականի բաժանումներ, որովհետեւ ՚ի սկզբան Քրիստոնէական Ընկերութիւնն համագործութեան և մրցման հիման վրայ միայն կը յառաջը։

Արդ՝ ՚ի պարծանո Հայաստանեաց Եկեղեցւոյ հրապարակաւ կը հունակենք ահա, որ մեր Եկեղեցին, իբրև հաւատարիմ աւանդապահ Քրիստոնէական նախսին Եկեղեցւոյ վարչական սկզբունքին, իւր կառավարութեան մէջ երբէք Եկեղեցականաց և աշխարհականաց խարութիւններ մուծած չէ, այլ ամեն ժամանակ Եկեղեցականք և ժողովրդի երեւափոխանք միաախին գործած են։ Յողունք դարսոց ՚ի դարս պատմութեան մէջ յիշուած

Եկեղեցականներէ և աշխարհականներէ միասին գումարուած ժողովներն, որոնք կատարուած են կամ կաթողիկոսաց ընտրութեան համար, կամ եկեղեցւոյ բարեկարգութեան համար, կամ արագին թշնամիններու պահանձումներուն պահանձումներու համար, կամ հերձուածները և աղանդներ մերժելու համար, կամ որ և իցէ ազգաց չէն իրողութեան համար, թողունք անցեալ, և մեր խորացնին նայուածքը գարձնենք միայն ներկային վրայ։ Հայաստանեացց Եկեղեցւոյ ժողովուրդն, ուր որ նկատենք, թէ իւր բնիկ Հայրենեաց մէջ, և թէ տարագիր պանդիստութեան, ամեն տեղ անարատ պահպանած է Եկեղեցական վարչութեան կամ տեսչութեան ըսկը զբանական մի, որ իւր առաքելական սքանչելի աւանդներէն մին է։ Ամեն տեղ ուր որ Եկեղեցի ունի Հայր, նոյն Եկեղեցւոյն մէջ ունի անշուշտ ինչպէս Եկեղեցական պաշտօնեացք, նոյնպէս և ժողովրդէն ընտրուած Եկեղեցպաններ, երեսփախաններ կամ թաղականներ, որոնք, թէ Եկեղեցական և թէ աշխարհական, իրարուհետ աջակցելով, նոյն Եկեղեցւոյն կամ թաղին պէտքերը կը տնտեսէն։ Ոչ ապաքէն սոյն այս հանրաշահ ըսկը զբանական աւանդներութեան և հաստատութեան գեղեցիկ տիպոր է նոյն իսկ Երեսփախանական Ժողովն իւր Եկեղեցական և աշխարհական աջակից անդամներով։

Արդ՝ խնդիր է այսօր Երեսփախանական Ժողովն մէջ թէ Կրօնական Ժողովն լոկ Եկեղեցականներէ պիտի բաղկացած լինի, թէ նաեւ աշխարհականներէ։ Անք կը սիրենք հաւատալ, որ սոյն օրինակ խնդիր մի երբէք պիտի ըստուեր Հայաստանեաց Եկեղեցւոյ զաւակներուն մէջ,

Եթէ Պալամէնիան լոկ Եկեղեցականներէ կազմուած Վահմիածնի Ամենողն ըստնասէր և Վահմանագրութիւնը լոկ Եկեղեցականներէ կազմուած Կրօնական Ժողովն չարտադրէր իւր պարունակութեան մէջ։ Ինչու չենք ու զեր հաւատալ, մասն զի հայ Եկեղեցականութիւնն ու ժողովրդականութիւնն այնպէս զանգուած են իրարուհետ, որ անհնարինէ բաժանուածն երեւակայել։ Եւ ահա այս զուգութիւնն իսկ Հայաստանեաց Եկեղեցւոյ առաքելական աւանդապահութիւնն մէջ է։ Հայոց Եկեղեցականութիւնն ոչ զեւտական ցեղապետական կղերական առաջնորդութիւնն է և այս Եկեղեցական յաջորդութիւնն է, այլ ժողովրդէն ընտրուած, վաւերացած և ընդունուած պաշտօնեութիւն։ Եւ եթի պարզ ասենք, Հայաստանեաց Եկեղեցւոյ Եկեղեցականութիւնը հաւովմէականին ըստնմանիր, ուր կղերը կընտրէ զեղերականն առաջակ մի փոխադրական իշխանութեամբ, այլ ժողովրդէն կը բավի և ժողովրդին կը գառնայ։

Եկեղեցին արդէն նուրիրագործած է յատկապէս Եկեղեցական պաշտօնեցից վերաբերեալ պաշտօններն, ինչպէս են սրբազն խորհրդներ մաստակուարել, արարագութիւններ և ծէս սեր իրատարել և այն, իսկ վարչական մասին՝ միշտ գործակից են իրարուհօտն և հովիւք։ Այսպէս կը ներկայանայ մեզ մեր Եկեղեցւոյ կեանքը, թէ պատմութեան մէջ, թէ աւանդութեան և թէ նոյն իսկ գործնական կանութեան։

Թաղային կամ ծխական Եկեղեցեաց մէջ Եկեղեցականի և աշխարհականի գործակցութիւնն ըստունելին զինի, տարակոյս ըլ կայ որ նոյնն ըստունելու է նա և Եկեղեցական աւ

մինաբարձր վարչութեան մէջ։ Այս վարչական սկզբունքն ուռ կան մ' է, որ եթէ թաղացին կամ ծխական տընտեսութեան համար ձգուած է, կը նշանակէ թէ բոլոր քրիստոնէական ընկերութեան համար ձգուած է, եթէ եկեղեցական շնուրածքի մի յարկին մէջ ընդունուած է, կը նշանակէ թէ միւս յարկերու մէջ մերժուած է։

Ուրեմն, ամենայն վատահութեամբ կարող ենք ասել, որ կրօնական Ժողովը, իբրեւ վարչական ժողով, անշուշտ պէտք է որ եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմուած լինի. բայց միայն՝ իրավական բառն փոխելու է, որ խիստ անպատշաճ (չասենք անիմաստ) կերպով գործ դրուած է Ասհմանադրութեան մէջ։ Վասն զի յանուն կրօնական ժողովին վերագրած պարտաւորութիւնքն (Ասհման. յօդ. 21. 22. 23. 24. 25. և 26.) գրեթէ ամենքն առ հասարակ ժողովրդի անհրաժեշտ միջամտութեամբ կատարուելիք պարտաւորութիւններ են, ինչպէս են Ադրին մէջ կրօնական զգացումն վարդացնել (որ կանոնաւոր դաստիարակութեան գործ է). Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահպաննել և քարեկարգութեանը հոկել (յորմէ ժողովուրդն անմասն չէ կարող լինի). Քահանացից կացութիւնը լւացնել (որ յատկապէս ժողովրդի գործ է). Բանիբուն եկեղեցականներ հասցնել (որ աւելի ժողովրդի հոգացողութեան պաշտօն է, վասն զի եկեղեցականներըն իրմէն կը բղին և իրեն համար կը պատրաստուին). Ադրին մէջ ծագած կրօնական վէճերն ըննել և լուծել, (Բնչեն կրօնական վէճերն). Եկեղեցական համագումար ժողովկազմել (որ նորելուկ է Հայաստաննեաց

Եկեղեցւոյ վարչական գրութեան մէջ). խնդիրն անլուծանելի կարծուած ժամանակ Երարատեան մայր Աթոռին դիմել, (որպէս թէ Վայր Աթոռն իրաւունք ունենար, արտաքսյեկեղեցական վարդապետութեան, գաւանութեան և կանոնաց՝ խնդիր լուծել), և այն և այն, զօրս աւելորդ կը համարինք մի առ մի յիշել որովհետեւ Ասհմանադրութեանյօդ ուածներն արդէն ամեն մարդ կարող է կարգալ։

Բայց թէ ինչո՞ւ համար Եկեղեցին բարւոք համարած է 'ի սկզբանէ անտի իւր վարչական գործերն եկեղեցականաց և աշխարհականաց գործակցութեամբ կատարել. ինչո՞ւ այս եղանակն ուրիշ ամեն եղանակներէն ընտրելագոյն համարուած է. և Բնչէ օգուստմեր ունի : Այս պարագաներն եւս բացատրենք, որպէս զի Ճշմարտութիւնն իւր ամբողջութեամբ փայլի և գեղեցիկութիւնն ամենուն տեսանելի լինի։

Ա. Քրիստոնէական ամեն Ճշմարիտ Եկեղեցի կարող չէ զլանալ աշխարհականներուն այն իրաւունքն, զորունէին Յրիստոնէական նախկին Եկեղեցւոյն ժամանակ : Վասն զի նախկին Եկեղեցւոյ մէջ ժողովսւրդն եկեղեցական գործքերէն բնաւ զատուած չէր, այլ ընդհակառակն հոգեկան ամուր կապով կապուած էր : Եկեղեցական վարչութեան զուտ կը զերական մենավաճառութիւնն վերջին գարուց Պատրականութեան ծնունդէ։

Բ. Ուէ քաղաքական և թէ եկեղեցական վարչութեանց մէջ միատեսակ, միակողմանի, մի յատուկ պարապմունքով զբաղուած անդամներէ կազմըւած ժողով կամ խորհուրդ միշտ անպատշաճ համարուած է և անհամապատասխան ընդհանուր կարօտու-

թեանց ինչպէս որ քաղաքական վարչութեան մէջ ամեն ժողովները լոկի իրաւագէաներէ և քաղաքագէամ մասենագիրներէ չեն կաղմուիր, նոյնպէս և եկեղեցականին մէջ հարկ ըրկոյ լոկ քարոզիներէ և աստուածաբաններէ կազմել վասնդի նոյն իսկ աստուածաբանք կարօտութիւն ունին հասարակաց դատողութեանը, ըստ որում ամեն մասնաւոր մշտկութիւն միշտ կը տանի դէպ ի անձու կ գաղափարներ, և հարկ է անշուշտ ընդհանուր գաղափարներու հետ զանգել պտղաբեր և արդիւնաւոր առնելու համար։ Վածուցիկ և սերտ կաւէն պտղաբեր հողպատրաստելու համար՝ պէտք է հետնաւազխառնել նոյնպէս եկեղեցական մարմնոյն մէջ հովուաց հետ հարկ է աշխարհական խառնել, որպէս զի Եկեղեցին կատարելասդէս ներկայացուի և ընդհանուր կարօտութիւններն լու հասկցուին։

Գ. Ինչպէս եկեղեցականաց, նոյնպէս և աշխարհականաց մէջ եւս կան չերմեռանդն, Եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր, մտացի. Ա. Դրոյ հմուտ, բարի քրիստոնեաց և բարի քաղաքացի անհամուներ, որոց գործակցին եկեղեցականաց՝ կատարեալ օրհնութիւն մ' է.

Դ. Ճաղովուրդն Եկեղեցւոյ մայրենի ծոցէն չօտարացնելու համար, իւր մնուած կեդրոնէն գաղթելու առիթներ ըստալու համար, հարկ է որ նոյն կեդրոնը, նոյն հայրենիքն իւր գործունէութեան առջեւ բաց լինի և աւելի գրաւիչ քան թէ գաղթականութիւնն, ինի բաւոր ժողովրդներ գաղթեցին Կաթոլիկութեան ծոցէն, որովհետեւ նոյն ծոցն իրենց համար անմատոյց էր և անսփրելի։ Վեզզուները փեթակէն ըստորշեցնելու համար՝ պէտք է աղատ թողուլ, որ մեզը կազ-

մեն փեթակին մէջ։ Այսպէս է աչխարհականաց միջամտաթիւնը եկեղեցական գործոց մէջ։

Ե. Երբ եկեղեցական գործոց վարչութիւնը հավուաց և ժողովրդի երեսփոխանաց աջակցութեամբ կը կատարուի, եկեղեցական և աշխարհական գատու յարձակումներ չեն լինիր, ոչ աշխարհականներն, և ոչ եկեղեցականք՝ աշխարհականներն, այլ որովհետեւ երկուքն միասին կը գործեն, ուստի և երկոքեան միասին արժանի կը համարուին թէ փառաց և թէ անարգաւնաց։ Եկեղեցին, որ սիրոյ թագաւորութեան ներկայացուցիչն է աշխարհիս վրայ, ինչպէս կարող է, իւր կոչման հակառակ, բաժանել իւր զաւակներն, որ շարունակ զիրեար ատեն և անգոսնեն։

Զ. Եկեղեցւոյ բուն կոչումն է քրիստոնէական կեանք տարածել հասարակութեան մէջ, որպէս զի իւր առաքելական և աւետարանական ըսկըզեանց մէջ պահպանուի և ընդհանուր արեգական տակ հասունաց և կաղմակերպի այն ընդհանուր կենսական զօրութիւնը, այն հասարակական գաշնակցութիւնը, որով Եկեղեցւոյ ամեն զաւակներն կարող լինին իրենց հասուն ճանաչողութեամբ ստութեան դէմ յարձակիլ և ճշմարտութեան թագաւորութիւնը յառաջանել։

Ըրդ Հասարակութեան մէջ որ և իցէ կեանք կենակցութեամբ կը տարածուի, ուրեմն ինչպէս կարող է Եկեղեցին կրօնական կամ քրիստոնէական կեանք տարածել իւր զաւակներուն մէջ, երբ բաժանումներ ընդունի իւր վարչութեան մէջ, որ աեսակ մի կեդրոն է կենաց տարածման։

Վերջաւորելով մեր խօսքը՝ հրապարակաւ կը հոչակեմք, որ Եկեղե-

ցին ազատ և ասլոհով լինելու համար, Եկեղեցին ամեն ներքին և արտաքին արհաւրաց դէմ հզօր կացուցանելու համար, հարկ է որ հօտը խորհրդակցի հովույն հետ եկեղեցական վարչութեան մէջ, ամեն մասամբ։ Այս է Քրիստոնէական Կախութին Եկեղեցւոց սկզբունքն, այս է մեր Հայառտանեաց Եկեղեցւոց գարերով պահպանած վարչական եղանակն, այս է պատմութեան վլատակիներէն և նոյն խոկ մեր ժողովոդի կետնքէն հետախուզութեամբ հանուած ճշմարտութիւնն, և այս է, զոր պարտ է ճանաչել և գրիել ամեն Հայ, որ կը փափարի հաւատարիմ աւանդապահ մը նուլ իւր մայրէնի Եկեղեցւոց քրիստոնէական ճշմարիտ ոգւցն։

### ՎԵՐՍԻՆ

### ԱՌ ԵՐԱԶՄՈՅՉՆ ԱՐԾԱՎՈՅՑ

ՍԻՕՆԻ մէջ (թիւ 10. 1871) քառանկն աւելի ծանրակշխա. Հարցումներ առաջարկելով Արշակունի, Ա. Աւատիսի դէմ հրատարակած իւր զրախոս դիտողութեանց և յօդուածոց նկատմամբ, պահանջած էինք, առանց փախուստ տալու պաշտպանելիւր հրատարակութիւնքն և առանց յաջ և յահեակ խոտորելոց մի առ մի պատասխանել մեր հարցումներուն։

Արշակունի (թիւ 925), ըստ իւր ոք կարամութեան իրը ՚ի պատասխանի Ախօնի գրուածքին՝ Զախորդ յարյակում վերնագրով յօդուած մի հրատարակած է, որոց պարունակութիւնն պատ-

շաճ կը համարինք ահա համառօտաց գրութեամբ յառաջ բերել և ցցց տակ թէ ոքախ անսոեղի են և բուն խնդրոց վերտքերութենէն արտաքոյ,

1. Արշակունի ըստ հաւատառտար, որ Ախօնի յօդուածն Ոիարանութեան խորհրդակցութեամբ ու. Ա. Պատրիարքի համարութեամբ հրատարակուած է. ուստի և Եփի մերտիմական մորդարեսութեամբ կը գուշակէ որ յօդուածի հեղինակն անդարձույց յանցաւ որ համարուելով պիտի գատապարտուի, ըստ որում գրուածոյն ոճն անգամ անվել կը դատէ Արօնական Ոիարանութեն։

2. Արշակունի, մեր հարցումներէն երկու հատն միայն յիշելով և ինքնին ըստ պատասխանելով, Եփիպաթեակ Հայ հասարակութեան կը վէրբերի, կ'ըսէ, ուղարկ Ախօնի ինդրած մէնութեան և անոնց գիտակութեան է իսկ ինքն ձեռք կ'առնու. Ակարուզ եպիսկոպոսի զրուատանցոց թելն և հնակարկատական ամենայն ճգամբ կը ջանայ կարկատել, որպէս թէ իբրեւ օրինաւոր առաջնորդ գնացած է Ակարուզն ԱՌ իսկ առաջն իւղին նոյն իւղ յաղթաղեցէ նոյն իւղին. Եռապար գուշոյէ հրատերեալ . . . .

3. Արշակունի, Եփիպատոսի և Աղեքաննդրից կալուածներն ցարդ Ա. Արժուանին ըստ յանձնուելուն համար, յանցաւոր կը գատէ զնոյն խոկ Ոիարանութիւնն, որ, որպէս թէ օրինաւոր փոխանորդագրով օրինաւոր փոխանորդ ըստ կարգեր, որ կալուածներն իւրեն յանձնուին։

4. Արշակունի, Յակոբեան եղբարց համարատուութեան խնդրոյն համար կ'ըսէ թէ հնգամեայ հաշիւ տուած են ՚Ն. Վ. Կուպոր փառացին, որ և հրատարակուած է Արշակունի մէջ։

5. Արշակունի ըստ յաջ արդարացնել զնոյն, որպէս թէ միշտ որդիսական մեր ունեցած է Ա. Ամոռոցո Ոիա-